Հաշվետվություն

գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

1) Գայանե Վասիլյան

2) Արփինե Մելքումյան

2. Զբաղեցրած պաշտոնը

1) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության ամփոփ վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ

2) «Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի տեղեկատվական անվտանգության պատասխանատու

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բանգկոկ, Թաիլանդի Թագավորություն, 2025 թ. ապրիլի 2-4-ը

4. Հրավիրող կողմը

Ասիական Զարգացման Բանկ (ADB)

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Սոցիալական պաշտպանության տվյալներ և մոնիթորինգ» եռօրյա աշխատաժողովին:

Աշխատաժողովին հրավիրված էին 15 երկրներից մասնակիցներ՝ սոցիալական պաշտպանության և վիճակագրության ոլորտների համապատասխան մարմիններից (յուրաքանչյուր երկրից՝ մինչև 3 ներկայացուցիչ):

6. Քննարկված թեմաները

Հանդիպման օրակարգը կցվում է:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովն ուներ հետևյալ կառուցվածքը.

Օրվա առաջին կեսին Ասիական Զարգացման Բանկի կողմից հրավիրված տեղական և միջազգային փորձագետների կողմից ներկայացվում էին տեսական և ուսուցողական նյութեր, այդ թվում՝

- «Սոցիալական պաշտպանության հիմնական կառուցվածքը»
- «Մոնիթորինգ և գնահատում (ՄԳ)» համակարգը
- «Մոնիթորինգի շրջանակը և գործիքակազմը»
- «SMART և CREAM ցուցանիշները»
- «Տվյալների բազաները և թվայնացված ցուցանիշների դերը սոցիալական պաշտպանության ոլորտում, մասնավորապես ՄԳ գործընթացում»
- «Ադապտիվ և փոփոխություններին արձագանքող սոցիալական պաշտպանության մոնիթորինգ» և այլ թեմաներ:

Օրվա երկրորդ կեսին անցկացվում էին թիմային աշխատանքներ, վարժություններ, ինչպես նաև առանձին երկրների փորձի քննարկումներ՝ ներկայացված օրինակների հիման վրա:

Հարկ է նշել, որ Արփինե Մելքումյանի կողմից, որպես հաջողված օրինակ, ներկայացվեց Հայաստանում գործարկված «e-disability» հարթակի, թվայնացված տվյալների հնարավոր վերլուծությունների և ՄԳ-ի վերաբերյալ շնորհանդես: Շնորհանդեսը մեծ հետաքրքրություն առաջացրեց մասնակիցների շրջանում, ինչի արդյունքում ծավալվեցին ակտիվ քննարկումներ՝ ուղղված տվյալների աղբյուրներին, տեխնիկական կառուցվածքին, շահառուների ներգրավմանն ու օգտագործման արդյունավետությանը:

Աշխատաժողովի ընթացքում ձևավորվեցին երկկողմ խմբեր՝ երկուական երկրների ներկայացուցիչներով: Հայաստանը ներկայացվեց նույն խմբում Վրաստանի հետ: Վերջին օրը յուրաքանչյուր խումբ սահիկաշարի տեսքով ներկայացրեց մեկ սոցիալական ծրագրի օրինակ՝ օգտագործելով աշխատաժողովի ընթացքում ստացած գիտելիքները: Մեր խումբը ներկայացրեց և Հայաստանում, և Վրաստանում իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագիրը:

Ներկայացումն ընդգրկում էր մոնիթորինգի շրջանակի ձևավորման, ցուցանիշների ընտրության, տվյալների հավաքագրման, վերլուծության և արդյունքների օգտագործման հիմնական փուլերը: Շեշտադրվեց նմանությունների և

տարբերությունների վերլուծությունն ու ծրագրի ազդեցության գնահատման մեթոդները: Ներկայացումը արժանացավ դրական արձագանքի՝ ներկայացման հստակ կառուցվածքի և գործնական մոտեցումների համար:

8. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքը

Ասիական Զարգացման Բանկը ներկայացրեց սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական հարթակի (SPICES) մշակման ընթացքը: Այն նախատեսում է ստեղծել տվյալների հավաքագրման, վերլուծության և համեմատության միասնական միջավայր, որը կկիրառվի տարբեր երկրներում՝ միևնույն ձևաչափով:

SPICES համակարգի փորձնական փուլին մասնակցելու նպատակով Ասիական Զարգացման Բանկը պաշտոնական առաջարկով կդիմի ՀՀ կառավարությանը՝ Հայաստանը ներգրավելու որպես պիլոտային երկիր: Ակնկալվում է, որ մասնակցությունն այս նախաձեռնությանը կնպաստի սոցիալական պաշտպանության ոլորտում տվյալների որակի բարելավմանը, մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և համադրելիության ապահովմանը տարածաշրջանային մակարդակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Գայանե Վասիլյան

Արփինե Մելքումյան

08.04.2025 թ.